

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՆՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

Բ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԿՉՈՒԹՅՈՒՆ
2011

Կարինե Ավագյան
Հայաստանի պատմության պետական թանգարանի ավագ
գիտաշխատող

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱՆ ԴԵՌ ՈՒՂՈՐՈՐԴՈՒՄ Է...

«Յուշեր գրող սերունդին, դժոխքին ճողոպրած սերունդին քիչ մարդեր մնացին: Թող գրեն, թող տպագրել տան իրենց ցաւը, աղաղակը, պատգամը: Ապագայ պատմարանը, պիտի հաւաքէ այդ բոլորը, պիտի հաւաքէ ծովացած ու ալիքուող այդ յուշերը, սուգակի մը նման պիտի իջնէ խորը այդ ալեկոծ ծովին ու ճշմարտութեան մարգարիտները դուրս հանէ անոնցմէ, որպէսզի մարդը առաւել՝ մարդանայ...»¹:

*Բժիշկ Թորոս Թորանեան,
Հալէպ 1984 թ. ապրիլ*



Հայաստանի պատմության պետական թանգարանի նոր պատմության ֆոնդի թիվ 948 ցուցանմուշ – Մասունքի գաղտնախորհուրդ բովանդակության վերծանման ամփոփագիրն է տողերիս հեղինակի «Թանգարանային առարկան՝ թանգարանագիտության հիմնահենք» հոդվածը, տպագրված թանգարանագիտական «Թանգարան» հանդեսի 2009-ի հո-

բեյանական թիվ 1 համարում²: Այժմ բացենք փակագծերը, հակիրճ ներկայացնելով Մասունքը, որն առաջին հայացքից ուլունքաշար համրիչ է, իրականում՝ երիտթուրքերի կողմից ծրագրված Հայոց ցեղասպանության մասին ուրույն վկայագիր: Համրիչի նախամուտ առաջին անհամաչափ հատին 71-րդ հատի անվանակիր, Չանդրըրի աքսորական, Պոլսո Ֆերիքեյի մուխթար (թաղապետ) Վարդերեսը (Աթանասեան – Կ. Ա.) փորագրել է. «Չանդրըրի 1915 թ. Ապրիլ 11 Յիշատակ», ապա 99 համաչափ, գլանաձև հատերին արձանագրել Չանդրըրի իր աքսորակից ընկերների ազգանունները, երբեմն՝ անունները, ընդգրկելով 103-ին. թիվ 55 հատին հավելել է «Լևոն – 2», 86-ին՝ «Օհնիկեանք – 4», այսպիսով հավաստելով երկու Լևոն անունով աքսորականի, Օհնիկեան

¹ Պատմեց Սուրեն Գալէնտր, գրի առաւ Մանուէլ Քեօսեան, Կեանք մը նուիրում, Պէյրուք, 1984, էջ 8, 24:

² Կարինե Ավագյան, Թանգարանային առարկան՝ թանգարանագիտության հիմնահենք, «Թանգարան», թանգարանագիտական, գիտատեսական և մեթոդական հանդես, Երևան 2009, թիվ 1, էջ 120-124:

ընտանիքից՝ չորս տարագրյալի մասին¹: Ներկայացնում ենք համրիչին փորագրված անվանացանկը՝ հերթականությամբ. Կոմիտաս Վ., Յովհան Վ., Քաջունի Քինյ, Ճեվահիրճի, Ռ. Սևակ, Միսքեան, Թօփճեան, Վարդան Քինյ, Գ. Ճեվալ, Գազազեան, Թորգոմեան- բժիշկ, Պողոսեան, Տինանեան, Միրզա, Ալթունեան-ատամնարոյժ, Կիլիստան, Ջարեհ, Եգնիկ, Ասատուր Վ.- դեղագործ, Մանիկեան, Ջարիֆեան, Միսքեան, Դաճեան, Դազարոս, Թերզեան, Նշան, Նարկիլեճեան, Արսենեան, Դանիելեան Պ. փազտաբան, Չերազ, Մովսես, Տ. Քելեկ – խմբագիր, Բ. Քեչեան, Թօփճեան, Անտոնեան, Թօլայեան, Շահնուր, Ս. Սրենց- ուսուցիչ, Խօճասարեան, Վարուժան, Շամտանճեան, Չավուշեան, Թապազեան, Տխրունի, Աղապապեան, Բարսեղեան, Տօրեան, Եսայեան – տաղարտը, Գոչո Արթին, Երջանիկ, Ջենոբ, Խաչիկ, Զրանդ, Երևում, Լևոն-2, Ագրիկ, Գանթարեան, Կոզմոս, Պէլլերեան, Թաշճեան, Դանեսեան, Արամ, Մելիք, Տօվլեթեան, Քեհեանեան- արհեստավոր, Մաղազաճեան, Պասմաճեան, Մելքոնեան, Ջաճը- ճարտարապետ, Արսլանեան, Վարդերես-մուխթար, Ֆերուխան, Սարաֆեան, Ալթունեան, ճամպազ, Զրաչ, Մոմճեան, Գալենտեր, Վաղինակ, Գալֆայեան- պաշտօնեայ, Պէլլերեան, Պարոյր, Նոյիկյանձնակատար, Թաթարեան, Քեօլեան, Օհնիկեանք – 4, Թերլեմեզ- սեղանավոր, Տեր-Գեորգեան, Պասմաճեան, Գայրճճեան, Իմճիճեան, Գարակեօզեան, Մանեսեան, Դոնչէկիւ, Փարիսեան, Յ. Գորեան – վճռկն., Քերոբեան- պատուելի, Թումաճան, Պալազեան – ծ. վ.:

Երիտթուրքերը 1908 –ին իշխանության գալով «Ազատություն, արդարություն, հավասարություն» կարգախոսով², իրականում կարողանում են շղարշել իրենց բուն նկրտումները, մինչև հարմար պահը, որ Առաջին համաշխարհային պատերազմը դարձավ: Կարգախոսը սահմանադրական հովերին վստահած հայ մտավորականության համար ճակատագրական խայծ էր ըստ էության, և 1894-1896-ի ահավոր ջարդերից³ հետո երկրից հեռացածները վերադառնալով, 1915-ի գարնան կեսերին արդեն Թալեաթի նենգադավ հղացումների ծուղակում էին. ամիսներ առաջ կազմած այն «սև ցանկերում»⁴, որոնք բացվեցին 1915-ի Ապրիլ 11/24-ին, և սկսվեց ակնհայտ ձերբակալությունների, աքսորի, հետագա հետապնդումների շրջանը: Պետականորեն ծրագրված Հայոց ցեղասպանության առաջին բացահայտ օրն էր այդ: Ըստ համրիչի 99-րդ

հատի ազգանվանակիր Գրիգորիս Ծայրագույն վարդապետ Պալաքյանի «Հայ Գողգոթան» հուշավավերագրի միայն այդ օրը Պոլսում ձերբակալված 220-ից ավելի¹ հայ մտավորականների, ազգային կուսակցական գործիչների և հայտնի առևտրական- ձեռներեց մարդկանց հաջորդ գիշեր աքսորում են Այաշ և Չանղըրը: Հետպատերազմյան ընթացքի պրպտումներով հեղինակին հաջողվել է հնարավորինս հավաքագրել Այաշի և Չանղըրըի աքսորականների անվանացանկերը, համապատասխանաբար՝ 62 և 69 տարագրյալների մասին հակիրճ տեղեկատվությամբ², հետևաբար անուրանալի է ուսումնասիրվող թանգարանային առարկայի արժեքը, որպես բուն աղբյուր Չանղըրըի 103 աքսորականների վերաբերյալ: Շուրջ քսանամյա անընդմեջ պրպտումների արդյունքում մենք արդեն ամփոփել ենք Չանղըրըի աքսորականների համալիր անվանացանկը՝ 116-ի հասցրած, Այաշի աքսորականներինը՝ 83-ի, հնարավորինս մանրամասն տեղեկատվությամբ³:

Պրպտումը 2009-ի հունիսի կեսերին մեզ հասցրեց Հալեպի հայահոծ գաղթօջախ՝ տեղի Ազգային Առաջնորդարանի և Երևանի Հայոց ցեղասպանության թանգարանի տնօրենի և փոխտնօրենի՝ մեծարգո պարոնայք Հայկ Դեմոյանի և Սուրեն Մանուկյանի աջակցությամբ: Իրականացավ նաև ուխտագնացությունս Տեր Զօր, և Սբ. Նահատակաց եկեղեցու թանգարան-գրադարանին նվիրեցի 2002-ին տպագրված «Եղեռնահուշ Մասունք կամ Խոստովանողք և Վկայք Խաչի» գրքիս մեկ օրինակը: Մեկ շաբաթվա պրպտումներս հնարավորինս արդյունավետ եղան Ս.Օ.Խ.-ի (Սուրիոյ Օգնութեան Խաչի) «Անի», «Աևան», «Նաիրի» մասնաճյուղերի, համազգային Սուրիո շրջանային վարչության ներկայացուցիչների ջերմագին աջակցությամբ, որի համար՝ խորին երախտագիտությունս նրանց: Օգտվեցի Ազգային առաջնորդարանի, Քրիստափոր, Ճեպեճեան գրադարանների, Եկաւեան մատենադարանի քարտարաններից: Պոստան փաշա հասցեում գործող հայ ծերանոցում ծանոթացա այնտեղ պատասպարված հայերի անուն-ազգանվանացանկին՝ հուսալով գտնել Չանղըրըի և Այաշի աքսորականներից որևէ մեկի ազգականի կամ հետնորդի: Հանընկնող էին Թաշճյան (Հակոբ), Քեհեյան (Հայկունի), Քյուրքճյան (Լուսին) ազգանունները. առաջին երկուսը համապատասխանում էին համրիչի թիվ 60, 65-ի ազգանուններին, 3-ը՝ Այաշի աքսորականի (Ստեփան) ազգանունն էր: Բարեբախտաբար տվյալ անձանց ազգականները 1915 Ապրիլ 11/24-ի աքսորականների

¹ Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան, Հայ Գողգոթան, Ա հատոր, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1922, էջ 97,99, նույնը, Բ հրատ. «Հայաստան», Երևան, 1991, գլ. Գին տարեթիվ, նոր դարաշրջան, էջ 97-99:

² Տե՛ս Սերինե, Իմ երկրային ուղին, Վան-Արյան հրատ., Երևան 2005, էջ 213-214:

³ Տե՛ս Հայկական հարց հանրագիտարան, Երևան, 1996, էջ 198:

⁴ Տե՛ս Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան, նշվ. աշխ., Ա հրատ., գլ. Գեթսեմանիի գիշերը, էջ 76, Բ հրատ., էջ 78:

¹ Տե՛ս նույն տեղում. էջ 82, 83:

² Տե՛ս նույն տեղում էջ 86-90, 87-90, 96-99 (I, II հրատ.):

³ Կարինե Աւագեան, «Չանղըրըի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ»... թանգարանային ցուցանոյշը», Հանդես ամսօրեայ, Մխիթարեան հրատարակչատուն, Վիեննա-Երևան, 2008, 1-12, էջ 249-348:

կազմում չէին եղել. համենայնդեպս՝ հարցախույզի ենթարկվածները չէին հիշում:

Չանդրըրի և Այաչի աքսորականների վերաբերյալ վերջին լիահավաք տեղեկագրությունը ներկայացրել ենք 2008-ին՝ «Հանդես ամսօրեայ»-ի շուրջ 99-ը էջերում¹: Այսօրվա դրությամբ ամբարված նյութը՝ ուշագրավ դրվագներով, ներկայացրել ենք Հայոց ցեղասպանության 95-ամյակին նվիրված գիտաժողովին:

Մանրամասները:

Համրիչի առաջին հատին փորագրված է Կոմիտաս Վ.: Ունենք իր վերապրումի հետագա վերլուծության ուշագրավ մի մանրամասն: Կոմիտասը 1915-ի Ապրիլ 11/24-ին Պոլսում ձերբակալված և Չանդրըր աքսորված հայ երեւիների առաջին իսկ քարավանում էր և շնորհիվ հեղինակավոր անձանց միջնորդությունների՝ նույն թվականի մայիս 2/15-ին Պոլիս վերադարձածներից²: Պոլսում Կոմիտասը շուրջ 6 ամիս ապրում է իր տանը՝ մելամաղծի (ղեպրեսիայի) մեջ: 1916-ի գարնանը վիճակը կարծես մի պահ բարելավվում է: Իր մտերիմ բարեկամներից Հարենցը խորհրդակցելով բժիշկ Վահրամ Թորգոմյանի (համրիչ, թիվ 11) և հույն հոգեբույժ Գոլոսի հետ՝ Կոմիտասին հյուրընկալում է իր ամառանոցում՝ Կղզիներում: 1916-ի աշնանը մելամաղծը կրկնվում է, և մինչև 1919-ը վարդապետը գտնվում է Պոլստ Շիշլիի հոգեբուժարանում³, ըստ ֆրանսահայ հոգեբույժ Լուիզ Ֆոլ-Հովհաննիսյանի՝ ֆրանսիական հոգեբուժարանում⁴: Այստեղից «Կոմիտաս վարդապետի պաշտպան հանձնախումբ»-ը 1919-ի ապրիլի 7-ին նրան տեղափոխում է Փարիզի Վիլ Էվարի հոգեբուժարան, իսկ 1922-ի օգոստոսի սկզբներին՝ տեղավորում են Վիլ ժուիֆ հոգեբուժարանում, համրահայտ հոգեբույժ դոկտ. Լվոֆի հսկողության ներքո, ուր 1935-ին կնքում է մահկանացուն: Ներկայացնում ենք Կոմիտաս վարդապետի 1916-ի վերջին լուսանկարը (տես՝ նորահայտ նկարաշար, այսուհետ՝ ն.ն., նկ. 1), երբ արդեն հոգեցունց էր⁵:

Փարիզաբնակ հոգեբույժ Լուիզ Ֆոլ-Հովհաննիսյանին մեծ դժվարությամբ է հաջողվում թափանցել այդ տարիների բժշկական արխիվները, քանզի Ֆրանսիայի օրենքի համաձայն 150 տարի հետո են միայն արտոնվում արխիվային ուսումնասիրությունները: Օրենքի սահմաններում ընդառաջում է Արխիվների նախարար Ժան Ֆաբիեն, միջամտում է հայոց Վեհափառ Վազգեն Առաջինը՝ իր թույլտվությամբ, քանի որ Կոմիտասը ժառանգ չուներ և առարկելու իրավունքը հայոց եկեղեցուն էր

միայն: Հոգեբույժ Լուիզ Ֆոլ-Հովհաննիսյանը գրում է. «Որպես հոգեբույժ, վկայակոչելով փաստաթղթերը, կհայտարարեմ, որ Կոմիտաս Վարդապետ չիզոֆրենիա չէ ունեցած...Ըստ իս հիվանդությունը մելամաղծոտություն է: Ան կարծես սզավոր մըն է, ճգնավոր մը... Բժշկական արխիվներուն ծանոթանալեն մարդ չի կըրնար ինքզինք հարցում մը չընել. արդյոք այս մարդը ինքզինքը ամեն ինչն չի՞ գրկեր կոր, արդյոք այս սզավոր մարդը ողջ մեռել մը չէ՞... Բժիշկները մինչեւ վերջ կհաստատեն, որ ինքը շատ կապված էր իր կրոնքին: Արդյոք իր փափագը մեռնիլը չէ՞ր: Երբ այդ հարցումներս, մտքերս Վեհափառ Հայրապետին ըսի, ան բացատրություն տվավ, որ մեր կրոնքը չի թուլատրեր. կյանքը Աստված տված է, եւ մարդ իրավունք չունի այդ կյանքը փչացնել, չապրել: Կարելի է որ կրոնական շատ մեծ զգացումին համար է, որ Կոմիտաս ինքզինք ողջ-ողջ թողած է»¹:

1921 թ. Կոմիտասին այցելում է իր մտերիմ բարեկամ նկարիչ Փանոս Թերլենեզյանը: Խոսակցության ընթացքում Թերլենեզյանի հարցին, թե ո՞ր երաժշտությունն է լավը, հայկականը, թե՞ եվրոպականը, Կոմիտասը զայրացած պատասխանում է. «Եղբայր, դու ուզում ես ծիրանից դեղծի համ առնիլ. նա իր տեղն ունի, մյուսը՝ իր»²: Մի՞թե դատողությունը կորցրած մարդու արտահայտություններ են սրանք: Դոկտոր Մորիս Դյուքոստեն գտնում էր, որ Կոմիտասի լռությունը յուրատեսակ լռություն էր, որ սկզբնական շրջանում երկար զրուցել են իրար հետ և աստիճանաբար, տարեցտարի վարդապետն իրեն լռության է մատնել³: Պատահական չէ նաև Կոմիտասի անվան հայտնվելը Արշակ Ալպոյաճյանի նահատակաց ցանկում⁴: Ըստ էության Կոմիտասը տառապել է վերապրողի, այն էլ համճարեղ հայ վերապրողի թախիծախտով. ախտի ինքնօրինակ դրսևորմամբ, որ ցեղասպանություն կոչվող արհավիրքի դաժան հետևանքներից մեկն է:

Համրիչի թիվ 38-ին փորագրված է Ս. Սրենց- ուսուցիչ (բուն ազգանունն է՝ Գըլըճեան – Կ.Ա.): Հնարավորինս հավաքագրված կենսագրականը ներկայացրել ենք 2008-ի «Հանդես ամսօրեայ»-ում: Այսօրվա դրությամբ, սակայն, ունենք կենսագրական մոր մանրամասներ, աքսորադարձից հետո ապրած կյանքի մի նորահայտ դրվագ: Սրենցը ոչ միայն ճանաչված ուսուցիչ էր, այլև խմբագիր, գրող, թարգմանիչ, հանրային, դաշնակցական գործիչ: Բնիկ Ռոդոստոյից էր: Ավարտել է Նանսիի (Նիս) համալսարանի մանկավարժական մասնաճյուղը և մինչ

¹ Տես Կարինե Ավագեան, նույն տեղում:

² Նույն տեղում, էջ 256, ժնթ.17:

³ Նույն տեղում, ժնթ.18:

⁴ Տես Գոհար Աճեմյան, Հիշատակի խարույկ, Վան-Արյան, Երևան, 1999, էջ 82:

⁵ Տես Կարո Գեորգեան, Ամենուն տարեգիրքը, Պեյրուբ-Լիբանան, 1956, էջ 25:

¹ Գոհար Աճեմյան, նույն տեղում., էջ 82-84:

² Նույն տեղում, էջ 83:

³ Նույն տեղում, էջ 78:

⁴ ԳԱԹ, Արշակ Ալպոյաճեանի ֆ., արխիվ 44, թերթ 4, Կարինե Ավագյան, Եղեռնահուշ Մատուց կան խոստովանողը և վկայք խաչի, «Զանգակ-97»- «Մուղնի», Երևան, 2002, ժնթ. 102, էջ. 37-38, 84:

«Հիւրիէթ»-ի հռչակումը որպէս տնօրեն պաշտոնավարել է զանազան ազգային վարժարաններում (Պոլսում, Ռոդոստոյում, Էդիրնուում ևն): 1909-1910 տարեշրջանից մինչև 1912 թվականի հունիսը պաշտոն է ստանձնել Պարտիզակի Բարձրագույն վարժարանում, դասավանդել ֆրանսերեն, թուրքերեն, Թուրքիո պատմություն: Պարտիզակից տեղափոխվելով Պոլիս՝ աշխատում է «Ազատամարտ»-ում, ուր թուրքերեն էր թարգմանում թերթի կարևոր խմբագրականները, որոնք մեկ-երկու օր հետո տպագրվում էին առաջին էջին՝ թուրք ընթերցողի համար:

Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքյանի Չանղըրըի քստրականների անվանացանկում թիվ 25-ն է, համրիչի՝ թիվ 38-ը, Թեոդիկի «Ա. զինադադարէն վերջ դարձողներ»-ի մեջ ներկայացված. «Չանղըրի, Գօմիա, յետոյ Պօլիս ծուարած»¹: 4. Գեորգյանին հայտնի է վերջինիս Գոնիայում լինելու, «Գաղտագողի ճամբաներով» Պոլիս վերադառնալու իրողությունը և այն, որ մայրաքաղաք վերադառնալով՝ «Փոխած էր անունը և կը կոչուէր Քեօմիւրճի Սերգիս»: Ջբաղվում էր... ածխավաճառությամբ²: Ձինադադարից հետո որոշ ժամանակ Սրենցն աշխատում է «Ճակատամարտ»-ի վարչության կազմում, միաժամանակ աշխատակցում է թերթին՝ Թուրքիայի մասին հմուտ հոդվածներով:

Գրում է նաև «Տոմսեր»՝ «Ծերուկը» կեղծանվամբ³:

Քեմալականների հաղթանակից հետո Սրենցն ընտանիքով հեռանում է Պոլսից, անցնում Ռումինիա: Ստանձնում է Սթրուկլայի որբանոցի տնօրինությունը, ավելի ուշ՝ դարձյալ որպէս տնօրեն երկար տարիներ պաշտոնավարում Կալացի և Բուքրեշի (Բուխարեստ) ռումինահայ ազգային վարժարաններում: Վերջին տարիներին նա աշխատակցում էր տեղի «Արագ»-ին և, ինչպէս Սիրունին է վկայում, «Բաւական համով կը գրէր»⁴: Սրենցը մահկանացուն կնքել է Բուքրեշում, 1955-ի հուլիսի 19-ին⁵: Ներկայացնում ենք Կարո Գեորգյանի Տարեգրքերից 1956 թվականի հատորյակում ներառված Պարտիզակի Ամերիկյան Բարձրագույն վարժարանի 1912-ի ընթացավարտների և ուսուցիչների խմբանկարը, որի ուսուցիչների կազմում առաջին աթոռին նստած ուսուցիչը Սարգիս Սրենցն է (տես՝ ն.ն., նկ. 2):

Համրիչի թիվ 46-ին փորագրված Բարսեղեան ազգանվանակրի վերաբերյալ տեղեկությունը բավականին ծավալուն է՝ ծննդյան և մահ-

վան ստույգ թվականներով, առկա լուսանկարով¹ (տես՝ ն.ն., նկ. 3): Դոկտ. Արմենակ Գ. Բարսեղյանը ծնվել է 1883 թ. մարտի 22-ին, Թոքատում: Նախնական կրթությունը ստանալով ծննդավայրում՝ 1897-ին մեկ տարի սովորել է Մարզվանի քոլեջում: 1898-ին հայրը՝ ժխախտի վաճառական Գեորգ Բարսեղյանը, որդուն անձամբ տանում է Էջմիածին՝ Գեորգյան ճեմարանում ուսանելու: 1904-ին նա հաջողությամբ ավարտում է ճեմարանը: 1911-ին փիլիսոփայության դոկտորի աստիճան է ստանում Բեռլինի համալսարանում և վերադառնում ծննդավայր՝ Թոքատ:

Մեկ տարի ուսուցչությամբ է զբաղվում Սամսոնում, ապա մեկնում է Պոլիս, որտեղ պատմություն, փիլիսոփայություն և հայերեն է դասավանդում Եսաեան, Նիկողոսեան վարժարաններում, Ամերիկյան աղջկանց քոլեջում:

Ըստ Արշակ Ալպոյաճյանի տեղակատվության «1915-ին մտաւորականներու հետ ինքն ալ կ'աքսորուի Այաշ և իբր ամերիկեան վարժարանի ուսուցիչ՝ դեսպան Մորկընթաուի միջնորդութեամբ կ'ազատի վիճակակից ըլլալէ իր ընկերներուն»²: Այն, որ վերապրողն քսորից ազատվել է Թուրքիայում ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի միջնորդությամբ, տրամաբանական է, սակայն քսորավայրը կարծում ենք շփոթված է: Եզգրտենք փաստերով: Այաշի քսորական է եղել նահատակ Սարգիս Բարսեղյանը, համաձայն կնոջ՝ Պերճուհու (Պարտիզականյան-Կ. Ա.) հուշավերագրի³: Թեոդիկի 1916-1920 թ.թ. Տարեցոյցի «Գ.-Դիմումներով քսորէ դարձողներ»-ի կազմում Այաշից փրկված վերապրողները տասնմեկն են, որոնց թվում՝ Տքթ. Բարսեղեան⁴, որն ամենայն հավանականությամբ Այաշ է քսորվել վերոհիշյալի անունազգանվանակիցը լինելով: Այս անուն-ազգանունը՝ «Դոկտ. Արմենակ Բարսեղեան, ուսուցիչ և դաշնակցական գործիչ, վերապրող», Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքյանի Չանղըրըի քստրականների ցանկում է. թիվ 13-ը, համրիչի թիվ 46-ն է⁵: Ձինադադարից հետո Չանղըրըի քստ-

¹ Տես Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն Եւրոկիոյ հայոց, հրատարակութիւն Նիւ-Եորքի Եւրոկիոյ կրթասիրաց միութեան, Գահիրէ, տպարան Նոր Աստղ, 1952, էջ 1727-1729:

² Արշ. Ալպոյաճեան, նույն տեղում, էջ 1728:

³ Տես Պերճուհի, Խանձուած օրերը, «Հայրենիք» ամսագիր, ժՁ տարի, Բոստոն, 1938 թ., թիւ 12, գլ. VI, էջ 25:

⁴ Տես Թեոդիկ, «Ապրիլ Տասնըմէկ-1915», Ամենուն տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, 1916-1920, 4. Պօլիս, էջ 115:

⁵ Տես Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքեան, նշվ. աշխ., էջ, 96, Կարինե Ավագյան, Անզուգական ցուցանմուշ կամ վերագտնված Մասունք, «Գարուն» ամսագիր, 1995, օգոստոս, էջ 72, Նույնը, Եղեռնահուշ Մասունք կամ Խոստովանողը և Վկայք Խաչի, «Ջանգալ-97», «Մուղնի», Երևան 2002, էջ 7:

¹ Տես Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, Ժ-ԺԴ տարի, «Ապրիլ տասնըմէկ 1915», էջ 115:

² Կարո Գեորգեան, Ամենուն տարեգիրքը, Պէյրու-Լիբանան, 1956 թ., էջ 218-219:

³ Կարո Գեորգեան, նույն տեղում, էջ 219:

⁴ Նույն տեղում, Յակոբ Սիրունի, Ինքնակենսագրական նօթեր, Սարգիս Խաչենց հրատ., Երևան, 2006, էջ 243, 290, 345:

⁵ Տես Կարո Գեորգեան, Նույն տեղում, էջ 220, Յակոբ Սիրունի, նույն տեղում, էջ 345:

րական Արմենակ Բարսեղյանը 1918-1922 թթ. Ազգ. ժողովում դաշնակցության թևի ղեկավարն էր: 1919-ին Պոլսում կազմակերպում է «Հայրենիքի օգնության միությունը»:

Քեմալականների Պոլիս մտնելուց առաջ Բարսեղյանն անցնում է Եվրոպա: 1925 թ. ընտանիքով տեղափոխվում է Ամերիկա և հաստատվում Բոստոնում: Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի առաջարկով պատրաստում է ամերիկահայ ուսումնական խորհրդի կանոնագիր-ծրագիրը, հեղինակում հայոց լեզվի Ա և Բ տարիների դասագրքերը: 1932-1939 թթ. այստեղ հրատարակում է մանկական «Արփի» ամսագիրը, Հայ Կարմիր խաչի հովանավորությամբ կազմակերպում է գիշերային դասընթացներ՝ չափահասների համար: Երբեմն աշխատակցում է «Հայրենիք»-ի խմբագրությանը:

Արմենակ Բարսեղյանը աշխատություններ է թողել մանկավարժության և հոգեբանության վերաբերյալ: Մահկանացուն կնքել է 1949-ի ապրիլի 8-ին¹:

2009-ի տարեմուտին Հունաստանից ընտանիքով ՀԴՊ թանգարան այցելած Հրանտ Պասմաճյանի հավաստմամբ ուսումնասիրվող համրիչի թիվ 67-ին փորագրված ազգանվանակիրը իր ազգականն էր: Ցուցանուշի վերաբերյալ տեղեկացված էր ամռանը Հայաստան այցելած հորաքրոջից, ում վկայությամբ ճարտարապետ Մանուկ Պասմաճյանին պահակնոց են տարել 1915-ի Ապրիլ 11/24-ին՝ առանց քաղաքավարության դեմ որևէ ոտնձգության: Նույն մտածված ծրագրի իրականացման ենք հասու դառնում՝ ըստ այլևայլ հուշ-անդրադարձների: Որոշված էր՝ մարդկանց տանից դուրս բերել խաբեությամբ, անաղմուկ: Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքյանի «Հայ Գողգոթայի» Չանդըրըի աքսորելոց ցանկում Մանուկ Պասմաճյանը թիվ 45-ն է. «Ճարտարապետ, մտավորական և հանրային գործիչ, վերապրող»²:

Համրիչի թիվ 78-ին փորագրված է Գալենտեր: Ըստ Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքյանի Չանդըրըի աքսորականների ցանկի թիվ 63-ն է. «Արամ Գալենտերեան՝ Օսմ. դրամատան պաշտօնեայ եւ եռամիսում հանրային գործիչ, վերապրող»³: Հայեպում պարզվեց, որ նրա եղբայրը՝ Սուրեն Գալենտերը, հուշագիրք ունի: Փնտրեցի և գտա այն ճեպեճեան գրադարանում: Այս գրքի էջերից իրավամբ անգերագնահատելի տեղեկություններ քաղեցի Գալենտերների՝ ժամանակին հայտնի ընտանիքի, մանավանդ՝ համրիչի թիվ 78-ի ազգանվանակրի վերաբեր-

յալ, հայտնաբերեցի ևս մի այաշական նահատակի՝ Երուանդ Տվեճեանին՝:

Մաթեոս-Արամ Գալենտերը ծնվել է Պոլսում, բնիկ ակնցի ուսուցիչ Մելքոն Գալենտերի ընտանիքում: Մայրը՝ Ջարուհին, Վարժապետյան պատրիարքի մոտ ազգականն էր. երկու քրոջ զավակներ էին: Արամ Գալենտերն ուներ երկու եղբայր և երկու քույր: Եղբայրները և ինքը, հարուն էին Վահան Չերագի (համրիչի թիվ 30-ի ազգանվանակրի, Մինաս Չերագի եղբոր՝ Գասպար Չերագի որդու) սկաուտական երիտասարդական շարժմանը, որը հաճո չէր ո՛չ համիդականներին, ո՛չ երիտթուրքերին: Եվ ահա ձերբակալվում է Մաթեոս-Արամը՝ հայ երևելիների առաջին իսկ հավաքին. 1915-ի ապրիլ 11/24-ի երեկոյան: Ապրում էին Պոլստ արվարձաններից Գատը գյուղում. Ազգային Արամեան վարժարանի թաղը: Այդ երեկո, ծրագրված «արարողության» համաձայն, ներկայանում է թաղի ոստիկաններից մեկը, բայց Մաթեոս-Արամին տանը չգտնելով՝ ապսպրում է, որ գալուն պես ներկայանա պահակնոց: Հայտնվում է ապա երկրորդ անգամ, երբ վերջինս տանն էր: Արամը մոտակա ոստիկանատուն է գնում տմային փանթոֆներով՝ հուսալով շուտ վերադառնալ: Եղբայրը՝ Սուրենը, անհանգստացած Արամի ուշացումից՝ գնում է նույն ուղղությամբ և տեղեկանում, որ գյուղի կենտրոնական ոստիկանատուն է տարվել: Որոշում է այնտեղ փնտրել եղբորը: Ճանապարհին հանդիպում է Գեորգ Թերճիմանյանի (Այաշի աքսորական-նահատակ Կ. Ա.) եղբորը՝ Սամուելին⁴ (հուշագիր էջին վրիպմամբ եղբոր անունը ևս Գեորգ է տպագրված), տեղեկանում, որ նույն կերպ Գեորգին են տարել: Նրանք քիչ անց հանդիպում են թաղի Արամեան վարժարանի տնօրենի՝ Հայկ Խոճասարյանի (համրիչ, թիվ 39) կնոջը, որը ևս նույն ուղղությամբ էր գնում: Տեղ հասնելով՝ պարզում են, որ իրենց հարազատներն այլոց հետ արդեն մասնավոր շոգեմակույկով տարվել են Պոլստ կեդրոնական ոստիկանատուն: Երբ Սուրեն Գալենտերը տուն է հասնում, քրոջից տեղեկանում է դրացի Լևոն էֆենտի Շամտանճյանի (Այաշի աքսորական-Կ. Ա.) ձերբակալության մասին, ում եղբայրը՝ Միքայելը ուսումնասիրվող համրիչի թիվ 41-ի ազգանվանակիրն է, Չանդըրըի աքսորական վերապրող: Շամտանճյանների տան խուզարկությունից հետո սկսվում է Գալենտերների տան խուզարկությունը՝ թաղի և գյուղի կեդրոնական ոստիկանատների գոմիսերների, թաղի մուխթարի (թաղապետ), իմամի և... Հարություն Սկրտչյանի մաս-

¹ Արշ. Ալափյանճեան, նշվ. աշխ., էջ 1728-1729:

² Տե՛ս Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեան, նշվ. աշխ., էջ, 98:

³ Նույն տեղում, էջ 99:

⁴ Պատմեց Սուրեն Գալենտեր, գրի առաւ Մանուէլ Քեօտեան, Կեանք մը նուի-րում, 1915-ը եւ ձերբակալութիւններ, Անօրինակ վրէժխնդրութիւն մը, յառաջաբան եւ խմբագրութիւն Թորոս Թորանեան, Պէյրուք, 1984, էջ 36-43, 44-45:

⁵ Տե՛ս Թեոդիկ, Յուշարձան նահատակ մտաւորականութեան..., էջ 40, 58, (I, II հրատ.):

նակցությամբ, որն իր հիմնավոր մասն ուներ ձերբակալվողների և ցանկերը կազմելու գործում:

Բուն խուզարկողը թաղի ոստիկանապետն էր. ստուգում է եռահարկ տան խոհանոցի ծխնելույզն անգամ: Արդեն ձերբակալված Արամ Գալենտերի սենյակից հավաքում են գրասեղանին գտնվող բոլոր թղթերը, գրքերն ու նամակները, լցնում են մի պարկի մեջ, կնքում և ընտանիքի անդամներին ևս կնքել տալով վերցնում հեռանում են: Հաջորդ օրն արդեն ամբողջ Պոլիսը խոսում էր մոտ 285 ձերբակալվածների մասին, որոնք գտնվում էին կեդրոնական բանտում:

Մաթեոս-Արամ Գալենտերը քսորից ազատվելով՝ Չանդըրըից դուրս է եկել 1915-ի օգոստոսի 14/27-ին, 11 կամ 13 իր քսորակից ընկերների հետ: Եերման հրամանը ստացվել է իր մեծ մորեղբոր՝ Պերո Քերեսթեճյանի ճիգերով: Վերջինս Պանք Օթոմանի տնօրենի տեղակալ էր, երբ այս հաստատության օտար տնօրենները պատերազմի ժամանակ մեկնեցին Եվրոպա: Հետագայում Արամ Գալենտերը հանգրվանել է Ամերիկայում, աշխատակցել «Պայթար», «Լրաբեր» թերթերին, «Տի Արմինիդն Միրըր Սփեքթյորը»-ին: Որնե Կրուսեի արտոնությամբ թարգմանել է ֆրանսիացի հեղինակի «Հայոց պատմությունը»: Մահացել է Նյու-Յորքում՝ 1964-ի մայիսի 8-ին, գրքերը կտակել է Երևանին, ստացվածքը՝ Հ.Բ.Ը. Միությանը:

Գրավոր անմիջական աղբյուրների ուսումնասիրությանը զուգընթաց՝ օգտվեցինք նաև համացանցից, հալեպաբնակ մեծարգո պարոն Սահակ Ակիլյանի պատրաստական աջակցությամբ: «Կարմիր կիրակի» կայքից ի հայտ եկան և՛ Չանդըրըի, և՛ Այաշի քսորականների նոր անուններ՝ համապատասխան ծանոթագրություններով, սուղ, բայց կարևոր մանրամասներ ոմանց մասին: Այդուհանդերձ անդրադարձը կատարել ենք վերապահումով: Չանդըրըի քսորականների ցանկին հավելվել են ևս 6-7-ը. նահատակ Հրանտ Աղաճանեան (?), (հմց, ծմթ. 8), վերապրողներ՝ Արթին Պողոսեան (հմց, ծմթ. 37), Մելքոն Կիլիսեբեան (հմց, ծմթ. 27), նահատակ Հովհաննես Գմբեթեան (հմց, ծմթ. 26), վերապրողներ՝ Սարգիս Շահինեան (հմց, ծմթ. 37), Բաղդասար Սարգսեան, նահատակ Յարութիւն Գալֆայեան: [(Վերջինս հնչակյան էր, նույնանուն ազգանվանակիցը հայտնի դաշնակցականի: Երկուսն էլ նահատակ են-Կ. Ա., (տես թեոդիկ, «Յուշարձան...», էջ 52, 64 (I, II հրատ.))]:

Որպես Չանդըրըի քսորական է ներկայացված Հրանտ Նազարեանը (առանց ծանոթության): Հայտնի է, սակայն, որ նա դեռ 1913-ին Պոլսից մեկնել է Իտալիա (Պարի) և ապրել այնտեղ մինչև կյանքի վերջը²:

¹ Տես Սուրեն Գալենտեր, նույն տեղում, էջ 11:

² Տես Վարդան Մատթոսեան, Հրանտ Նազարեանի նամակները Ենովք Արմենին, «Բազմավաչ», հանդես, Վենետիկ, Ս. Ղազար, 2006, 1-4, էջ 312:

Այսպիսով Չանդըրըի քսորականների թիվը հասնում է 119-120-ի:

Այաշի քսորականների կազմում, ըստ նույն կայքի, նոր անուններ են վերապրողներ Մարկոս Սերվեթը (հմց, ծմթ. 8), Հրանդ Աստուածատրեանը (հմց, ծմթ. 24), դոկտ. Նակուլեանը (հմց, ծմթ. չկա), հնչակեան Նշան Օտյանը (հմց., ծմթ. 39, վախճանը հայտնի չէ): Հիշատակված է նաև Երվանդ Օտյանը, որպես Այաշի քսորական, որը սակայն, հավաստի չենք կարող համարել: Հայտնի է, որ Երվանդ Օտեանը եղել է առաջին իսկ քարավանի «սև ցուցակում»¹, բայց իր երկրպագուներից Կարապետ Տիրհեմճյանը Ապրիլ 11-ի ահավոր գիշերվանից երկու օր անց նրան իր տուն տանելով թաքցրել է 21 օր²: Եթե այլ խմբով կամ անհատապես Այաշ քսորված լիներ, հետագայում նա այդ մասին անպայման կհիշատակեր իր սովորածավալ փաստավավերագրական «Անիծեալ տարիներ»³ հուշագրքում:

Այաշի քսորականների թիվն այսպիսով հասնում է 87-88-ի (?)՝ ևս մեկ անվան հավելումով՝ Երվանդ Տեվեճյան:

Հիշատակված կայքում Համբաձում Պոյաճեանը ներկայացված է Չանդըրըի քսորական, մինչդեռ Այաշական էր, նշված չէ Գ. Հյուսյանի քսորավայրը, որը Այաշն էր⁴: Սույն կայքի տեղեկատվության համաձայն պարզվել են նաև մի քանի քսորականների անուններ: Այսպես, հայտնի է համրիչի թիվ 61-րդ հատի ազգանվանակիր Հանեսյանի անունը՝ Հովհաննես, թիվ 77-ինը՝ Ջարեհ, թիվ 92-ինը՝ Ռաֆայել, թիվ 97-ինը՝ Կարապետ: Հայտնի է դարձել համրիչի թիվ 17-ի ազգանունը՝ Պարտիզպանյան, մասնագիտությունը՝ ատամնաբույժ, և քսորդարձ լինելը. վերապրող է:

Պրպտունների ընթացքում հայտնաբերեցինք նաև Չանդըրըի զինվորական 4-րդ վաշտի հրամանատարի առաջին տեղակալ Մեհմետ Իզզեթի լուսանկարը (Տես՝ ն.ն., նկ. 4)⁵: Ո՛վ էր այս մարդը, և ինչու՞ ենք նրա լուսանկարի հայտնաբերումը ուշագրավ համարում: Ըստ համրիչի թիվ 99-ի ազգանվանակիր Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքյանի «Ցեղով

¹ Տես Հակոբ Սիրունի, «Կոմիտասին հետ», էջմիածին, 1968, Դ, II. Կեդրոնական բանտին մեջ, էջ 33 (այստեղ էր. Օտյանի ազգանունն ընթերցվում է աղավաղված՝ Ուտի):

² Տես Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Ժ-ԺԴ տարի (1916-1920 թթ.), «Իսկական Իզնատ աղան», էջ 179-180:

³ Երուանդ Օտեան, Անիծեալ տարիներ, 1914-1919 (անձնական յիշատակներ, երեսան, Նաիրի հրատ., 2004:

⁴ Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքեան, նշվ. աշխ., էջ 87, 88 (I, II հրատ.), Բիւզանդ Պօզանեան, Դեպի Այաշ, Հին ու նոր յուշեր, Թեոդիկ, «Յուշարձան»..., էջ 102-103, 120-121 (I, II հրատ.):

⁵ Տես Կարո Գեորգեան, Դանիել Վարուժանի եւ Ռուբեն Սեւակի սպանութեանց վրիժառուն Մեհմետ Իզզեթ Պէյ, «Ամենուն տարեգիրքը», 1960, էջ 223:

Չերքեզ էր եւ ողջամիտ ու ազնիւ մարդ մը»¹: Համրիչի թիվ 35-ի ազգանվանակիր Արամ Անտոնյանն իր հուշերում նրան ներկայացնում է «Թուրք սպայ մը՝ Մեհմետ Իզզեթ պէյ, զինուորական հրամանատար Չանդըրըի»²: Սակայն տվյալ պարագայում կարևորը մարդու Մարդ լինելն է: Մեհմետ Իզզեթը խիղճը գրավ չդրած այն հազվադեպ մահմեդական պաշտոնյաներից էր, որը բարի խոսքով է հիշվում հուշագիր վերապրողների կողմից: Մնում է մեր երախտագիտության խոսքը՝ 1915-ի Սողոմ-Գոմորի պայմաններում Մարդ մնացած հատուկեմտին, ի դեմս Չանդըրըի զինվորական 4-րդ վաշտի հրամանատարի առաջին տեղակալ Մեհմետ Իզզեթ Պէյի:

Թանգարանային ցուցանմուշ – Մասունքով բացահայտվեց ոչ միայն Չանդըրը, այլև Այաշ քաղաքում հայության Գողգոթայի պատմությունը: Նրանք նույն 1915-ի չարաշուք Ապրիլ 11/24-ին ձերբակալված հայ երևելիներից էին, մեծամասամբ՝ ազգային կուսակցական գործիչներ, որոնց առավել դաժան պատժաբաժին էին նախատեսել իթթիհականները: Վերապրողներն այս քաղաքային մի քանիսն էին: Եվ ահա այսօր ունենք նրանցից երկուսի՝ Ավետիս Նազգաշյանի և Քրիստոս Գեորգիանի լուսանկարները:

1925-ին տոքթ. Ա. Նազգաշյանն իր հուշերն ամփոփել է «Այաշի բանտը. 1915 Ապրիլ 24-ին Կ. Պոլսէն ձերբակալուելով Այաշ տարուած եւ նահատակուած մտաւորականները»³ վերտառությամբ գրքում՝ զետեղելով նաև իր լուսանկարը: Երկրորդ վերապրողի լուսանկարը ձեռք ենք բերել 1926 թ. «Դրօշակ»-ի, թիվ 3-ի էջերից, իսկ Թեոդիկի 1916-1920 թթ. (Ժ-ԺԴ տարի) «Տարեցոյցում» հավաստված է Քրիստոս Գեորգիանի քաղաքային ազատվելու ստույգ պատճառը. «Թուրքիոյ զինակից Պուկարիոյ դեսպանը նախանձախնդիր էր փոկելու իր հպատակները եւ Քրիստոս Գեորգիանի պատկարահպատակ էր բարեբախտաբար»⁴ (տե՛ս նմ., նկ. 5, 6):

Թեոդիկի 1925 թ. «Տարեցոյցից» ունենք 1913-ին Պոլսո Մայր եկեղեցու հանդիսության օրն արված խմբակային մի լուսանկար, որում ի թիվս Իսրայել Տխրունու (նահատակ, համրիչ թիվ 44), Գեղամ Բարսեղյանի, Գրիգոր Թորոսյանի (Կիկո, Այաշի քաղաքային-նահատակներ- Կ. Ա.) և այլոց, առկա է թվաբանության ուսուցիչ, դարձյալ նահատակ

այաշական քաղաքային խաչիկ Իտարեճյանի նկարը (տե՛ս՝ նմ., նկ. 7)¹:

Այաշի քաղաքայիններից է Տիգրան Պաղտիկյանը: Թեոդիկի նահատակաց «Յուշարձան...»-ում հակիրճ գրված է, «Խարբերողի զօլեճական, ուսուցիչ, դաշնակցական»:- Մեռ. Այաշ»²: Մանուկ Գ. Ճեզմեճյանի «Խարբերող եւ իր զաւակները» սովորածավալ գրքի էջերից մեկում ի հայտ եկավ նրա նկարը, Մեզիրեի Ազգային վարժարանի ուսուցիչների և ընթացավարտների խմբանկարում (տե՛ս՝ նմ., նկ. 8, միջին շարք, ձախից՝ աջ 5-րդը)³:

Հալեպի ՀեՄ-ի (Հայ երիտասարդաց միության) Քրիստափոր գրադարանում ուսումնասիրեցինք Ղազար Չարըզի «Մարզպետը» (Հաճի Հիւսէյին) հուշավավերագիրը, և նոր մանրամասներով հարստացավ այս հայդուկ մտավորականի մասին տեղեկությունը:

Մարզպետ, բուն անունով՝ Ղազար Ղազարյան, կամ Ղազարոս Ղազարոսյան⁴: Այս անունն առկա է համրիչի թիվ 24-րդ հատին: Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքյանի այաշական քաղաքայինների ցանկում թիվ 45-ն է: Ըստ Այաշի վերապրող քաղաքային Բյուզանդ Պողոսյանի՝ քաղաքայինների երկրորդ կարավանից էր⁵: Չանդըրըի կամ Այաշի քաղաքային լինելու վերաբերյալ սրանք են առկա աղբյուրները: Ենթադրում ենք, որ համրիչի թիվ 24-ին արձանագրված նույն անվանակիրը Չանդըրը է քաղաքային Այաշի քաղաքային հայ գործիչ փոխարեն:

Ըստ Հակոբ Սիրունու հուշագրության Մարզպետն քաղաքից հետո հետքը կորցնելով հայտնվել է Բաղդադ-Բեռլին ճանապարհաշինության գործի մեջ, որպես Գերմանիայում ուսում ստացած քուրդ աշխատակցի որդի: Աշխատող ձեռքի հայթայթիչ էր գերմանացիների մոտ, հետևաբար մեծապես օգնել է հայ տառապալներին՝ աշխատանք տրամադրելով հենց նրանց⁶: Ըստ անմիջական գործընկերոջ՝ Ղազար Չարըզի հուշագրության, նա Հալեպում գործել է որպես իրեա Պոխոր էֆեմտի, աջակցությամբ դկտ. Խաչիկ Պողոսյանի (համրիչ, թիվ 12,- Կ. Ա.), ապա «Որպես 55 տարեկան, Պիթիսի Ձէյտան թաղէն, ոչխարի վաճառական

¹ Տե՛ս նույն տեղում, 1925, էջ 78:

² Տե՛ս Թեոդիկ, «Յուշարձան...», էջ 49, 67, (I, II հրատ.):

³ Տե՛ս Մանուկ Գ. Ճեզմեճյան, Խարբերող եւ իր զաւակները, Զրեզնոյ Զալիֆորնիա, 1955, էջ 355:

⁴ Տե՛ս Ղազար Չարըզ, Մարզպետը, (Հաճի Հիւսէյին), Հալեպ, հրատ. «Քրիստափոր մատենաշարի» թիւ 6, 1992, էջ 4: Կարինէ Աւագեան, Չանդըրըի 1915 թ. Ապրիլ 11. Յիշատակ..., «Հանդէս ամսօրեայ», 2008, 1-12, էջ 251, 265, 332-333:

⁵ Տե՛ս Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքեան, նույն տեղում, էջ 89, 90, (I, II հրատ.), Քիւզանդ Պօզաճեան, «Դէպի Այաշ...», Թեոդիկ, «Յուշարձան...», էջ 101/119, 109/127:

⁶ Տե՛ս Յակոբ Սիրունի, Ինքնակենսագրական նօթեր, «Սարգիս Խաչենց» հրատ., Երեւան, 2006, էջ 171-172, 337: Կարինէ Աւագեան, նույն տեղում, ծնթ. 236:

¹ Գրիգորիս Ծ. վարդ. Պալաքեան, նշվ. աշխ., էջ 144, 138 I, II հրատ.):

² Արամ Անտոնյան, «Ո՞վ կազմակերպեց սպանութիւնները», տես՝ Կարո Գեորգեան, «Ամէնուն տարեգիրքը», 1959, էջ 134:

³ Տոքթ. Ա. Նազգաշեան, «Այաշի բանտը. 1915 Ապրիլ 24-ին Կ. Պոլսէն ձերբակալուելով Այաշ տարուած եւ նահատակուած մտաւորականները», տպագր. «Հայրենիք», Պոսքըն, 1925, I հրատ.: Նույնը, Հայ մտաւորականներու ձերբակալութիւնը եւ Այաշի բանտը, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատ., Պէյրուք, 1969, II հրատ.:

⁴ Թեոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», Ժ-ԺԴ տարի (1916-1920 թթ.), էջ 186:

Հաճի Հիւսէյն էֆ.»¹: Ձիճադադարի վաղորդայնին Նիսիպիճնուճ էր, ուր արդեն վտանգավոր էր իր ներկայութիւնը: Պատրաստվում էր մեկնել արտասահման, սակայն հանկարծական մահը՝ ձիւց վայր ընկնելու պատճառով, ընդհատում է մեծ հայրենասերի գործունեությունը: Թաղվում է կառավարության կողմից՝ Նիսիպիճի թուրքական գերեզմանատանը, որպէս մեծարգո մահմեդական գործիչ...²:

Արժեքավոր են հատկապէս «Ազատամարտ»-ի խմբագրապետ, արևմտահայ հայտնի արծակագիր, Այաշի աքսորական-նահատակ Ռուբեն Ջարդարյանի սպանդի ճանապարհից կնոջը գրած վերջին երկու քարտերը: Դրանք ի հայտ բերեցինք Կարո Գեորգյանի 1959 թ. «Ամէնուն տարեգրքի» էջերից (տես՝ «Աքսորի նամակներ», 1-ին և 2-րդ քարտ-նամակները՝ թուրքերենով և հայերենով):

Քարտերը Կ. Գեորգյանին է տրամադրել Հ.Հ. Դաշնակցության Փարզի թանգարանը: Առաջինը՝ գրված Այաշից, թուրքերենով, 18 ապրիլ, 1915 թվակիր, երկրորդը՝ հայերենով, Անկարայից, 28 մայիս 1915 թ., երբ Ռ. Ջարդարյանն արդեն սպանդի ճամփա էր հանվել իր հինգ ընկերների՝ Է. Անունու, Գ. Խաժակի, տօքթ. Ն. Տաղավարյանի, Ս. Մինասյանի, Հ. Ճանկուլյանի հետ: Այս խումբը Հալեպ է հասնում 1915-ի հուլիսի 14-ին և արգելափակվում Ռոտ էլ Ֆարաժի պանդոկում: Այստեղից դուրս բերվելով՝ քշվում են Տիգրանակերտ, ուր դեռ չհասած՝ նահատակվում են հուլիսի 26-ին³: Ձեռագրին զուգահեռ՝ ներկայացրել ենք տպատառը և հասցեի կողմը: Երկրորդ՝ վերջին հայերեն քարտը գրված է մելանով⁴: Հասցեն նույնն է (թուրքերենով): Այն հանձնված է տիկին Ջարդարյանին 73 օր հետո՝ ոչ ինքնանպատակ: Նամակ-քարտը գրվել է Անկարայում 1915-ի մայիս 28-ին: Քարտի հասցեի կողմում կնիքների ուշագրավ պատմություն կա: Գրեթէ անընթեռնելի է Անկարայի նամակատան կնիքի թվականը, բայց հստակ ընթերցվում է Պոլսի Կալաթայի նամակատան կնիքը՝ ստացման թվականով՝ 8.7.331 թրքական տարեթվով, որ է՝ 1915: Քարտը Անկարայից Պոլիս է հասել 41 օր անց՝ 1915-ի հուլիսի 8-ին: Պոլսում այն հանձնվել է գրաքննության, որի քառակուսի կնիքին գրվել է. «Քննված է գրաքննության գծով», թիվ 22 գրաքննիչի կողմից: Պոլսի նամակատանն է մնացել ևս 32 օր՝ ըստ ծախ անկյունի վերջին կլոր կնիքի ամիս-ամսաթվի՝ 9.8.331, մինչև 1915-ի օգոստոսի 9-ը. գրված օրվանից 73 օր անց⁵: Այստեղից հետևում է, առնվազն, որ թրքական իշխանությունները ջանացել են խզել կապը

¹ Տես Դազար Չարըզ, նշվ. աշխ., էջ 20-21, 43, 46, 50:

² Նույն տեղում, էջ 230, 231:

³ Տես Կարո Գեորգեան, «Ամէնուն տարեգիրքը», Մասունքներ Ռուբեն Ջարդարյանին (Սպանդի ճանապարհին գրած իր երկու քարտերը), 1959, էջ 151:

⁴ Նույն տեղում, էջ 154, 155:

⁵ Նույն տեղում, էջ 151, 155:

մահապարտի և իր հարազատների միջև, անորոշության մեջ պահել վերջիններիս՝ կասեցնելով նրան փրկելու որևէ հնարավորություն:

Ունենք դարձյալ Այաշի աքսորական Բարսեղ Շահպազի վերաբերյալ մի մանրամասն, և նրա «Աքսորի նամակ»-ը՝ հղված իր քույրերին՝ Տիկնայք Ջարուհի Պահրիին և Եվգինե Խաչիկյանին (Շիշլի), Այնթապ, 6 յուլիս, 1915 թվակիր: Խարբերդի կոտորածներից հրաշքով փրկված երիտասարդ Վահե-Հայկը Թեոդիկին հայտնել է Շահպազի եղբրական մահվան մասին՝ հաղորդելով հետևյալը. «Ջարդեն 8 օր վերջ, Տիարպէքի կողմէ Բարսեղ կը բերուի Սեզիրի կեղդ. բանտը, ուրկէ քիչ առաջ հազարաւորներ շարան շարան տարուեր էին անվերադարձ: Բանտին տնօրէնը՝ Հասան կը շորթէ անոր ժամացոյցն ու դրամը, ազատելու պայմանադրական խոստումներով: Շաբաթ մը անօթի և փերիշան, ծեծով համեմուած, կը մնայ այդ քաւարանը՝ մահուան երթալէ առաջ: Օր մըն ալ լուր կը տրուի որ պատրաստ ըլլայ «տիվանը խորֆի»-ի հարցաքննութեան: Խաւար գիշեր: Քանի մը ժամտարմա կը հանեն զինք բանտէն դուրս և քիչ մը հեռուն՝ «Ֆապրիկքա»-ին պատերուն տակ կ'սպաննեն»: Ներկայացնում ենք Շահպազի նամակն ամբողջությամբ² (տես «Աքսորի նամակ»):

Հայտնաբերել ենք ևս մի այաշական-նահատակի՝ Երվանդ Տեվեճյանին: Հուշագիր հեղինակի նկարագրության համաձայն կատարյալ հսկա է եղել՝ հասակը երկու մետրից ավելի: Ըստ տարվա եղանակի զբաղվել է ձկնորսությամբ և բեռնակրությամբ: Ձերբակալվել և Այաշ է աքսորվել որպէս խիստ վտանգավոր անձ՝ ամբաստանվելով իբր ձերբակալված հայերի կազմակերպության գաղտնի թղթատար: Հուշագրի այս էջը վերնագրված է «Անօրինակ վրէժխնդրութիւն մը»³: Նորահայտ ազգանունը նոր փնտրտուքի մղեց: Դիմեցինք Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաստակաշատ հնագետ, պատմական գիտությունների թեկնածու Սեդա Դևեճյանին, ճշտելու՝ արդյոք ազգակցական կապ ունի՞ Այաշի աքսորական նահատակի հետ: Պարզվեց, որ հորեղբայրը՝ Հովհաննես Դևեճյանը (հետագայում՝ Արմեն Սեվան զրական անվամբ) 1911-ին եղել է Պոլսո Պերպրեանի շրջանավարտ (1907-1911), ապա արծանագրվել՝ իրավաբանական համալսարանում ուսումը շարունակելու համար: Հովհաննեսին հաջողվել է խուսափել բանակից, ընկերոջ հոր՝ դեղագործ Գրիգոր Միսքեճյանի միջոցով, ում ջանքերով մեկ այլ ընկերոջ՝ Հակոբ Ջորյանի (1936-1937 թթ. Հայաստանի պատմության պետական թանգարանի տնօրեն - Կ. Ա.) հետ ծպտված մեկնել են Բուլղարիա՝ 1915-ի փետրվարի 5-ին: Հովհ.

¹ Թեոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», Ժ-Ժ տարի, (1916-1920 թթ.), էջ 60-61:

² Նույն տեղում., էջ 60:

³ Տես Սուրէն Քալէնտր, Անօրինակ վրէժխնդրութիւն մը, նշվ. հուշագր., էջ 44:

Դեճյանին փրկողը, պարզվում է, եղել է Չանդրըղի աքսորական, համրիչի թիվ 22-ի ազգանվանակիր, նահատակ Գրիգոր Միսքեյանը¹: (Նահատակ է նաև համրիչի թիվ 6-ի ազգանվանակիր բժիշկ Ստեփան Միսքեյանը, որը Գրիգորի եղբայրն էր – Կ. Ա.):

Չարաղետ Ապրիլ 11/24-ի՝ Հայոց ցեղասպանության բացահայտ այդ օրվա հունձքին աքսորականների հենց առաջին քարավանի կազմում ըստ հուշագրությունների անուններ կան, որոնց ստույգ աքսորավայրը՝ Այա՝ չ'են՝ Չանդրըղ, հայտնի չէ: Ըստ Այաչի աքսորական-վերապրող Ավետիս Նազգաշյանի նրանք էին՝ Յակոբի տղա Գրիգորը, սրճեփ Յակոբը, գինեպան Օննիկը, նպարավաճառ Հակոբը²:

Երվանդ Օտյանը նույն օրերին վերաբերվող իր հուշամատյանում հիշատակում է Թաքսիմ գերեզմանատան անկյունի սրճարանի տիրոջ ձերբակալության մասին. «Կարծեմ հոս նըստիլը շատ ապահով չէ...», -ասում է իրեն այդ մասին տեղեկացնող ծանոթը³:

Անդրանիկ Ծառուկյանի՝ Ռուբեն Սևակի կյանքին նվիրված գեղարվեստավավերագրական «Սէրը Եղեռնին մէջ»⁴ և վեպում նույն օրերի ձերբակալվածների թվում նոր անուն է «Ազատամարտ»-ի դմապան Կարոն, որը, ամենայն հավանականությամբ, խմբագրատան անձնակազմի հետ աքսորվել է Այաչ:

Ահավասիկ մարդիկ, ովքեր կամ Այաչ, կամ Չանդրըղ են տարվել: Այսպիսով հավելվում է աքսորականների թիվը. և, այնուամենայնիվ... **Քվարանությունը չէ՝ Ցեղասպանության հատկանշականը...**

Յուրաքանչյուր աքսորականի անհատական Գողգոթայի պատմությանը հետամուտ՝ չենք անտեսել նաև նրանց հետնորդների փնտրտուքը: Այսօրվա դրությամբ հավելել ենք իրենց թիվը, ի դեմս այաչական նահատակ Մելքոն Կյուրճյանի (գրական անվամբ՝ Հրանդ) որդու՝ Վահրամ Կյուրճյանի: Ունենք նրա լուսանկարը ևս (տես՝ նմ., նկ. 9):

Հրանդ անունը փորագրված է համրիչի թիվ 53 հատիկին՝ ենթադրել տալով, որ Չանդրըղ է աքսորվել Այաչի վերոնշյալ տարագիր, գրական անվամբ Հրանդի անվանակիցը:

Ըստ առկա հակիրճ տեղեկատվության, Վահրամ Կյուրճյանը ծնվել է 1897-ին՝ Պոլսում: Քեմալական իշխանության հաստատումից հետո անցել է Լիբանան՝ Բեյրութ, ուր եռանդուն գործունեություն է ծավալել Լիբանանի հայ ազգային կյանքում: Հանկարծամահ է եղել սրտի

կաթվածից, 1955-ի մայիսի 17-ին¹: Մարդն ապրել է որպես արժանի հոր արժանի զավակ: Մինչդեռ հորից զրկվել էր 18 տարեկանում, նրա հոր եղերական մահն ուղեկից ունենալով... ողջ կյանքում:

Մելքոն Կյուրճյանն Այաչի բանտում մնացել է մոտ չորս ամիս և կնոջն այնտեղից գրած նամակում տեղեկացրել, որ 1915-ի հուլիսի 28-ին 33 ընկերներով Անկարա են ուղարկվում... յուրաքանչյուրն իր Գողգոթայի խաչը կրելու... Հրանդին, ականատեսների վկայությամբ, բաժին էր ընկել... կենդանի թաղվելը...²:

Ովքե՞ր էին վերապրողներն ու իրենց սերունդները: Ահա այս հարցադրման մեջ նաև պետք է փնտրել Հայոց ցեղասպանություն կոչվող արհավիրքի էական հատկանիշները.

1. Սպանդից մազապուրծ, մտահոգեցունց վերապրողներ, ովքեր նաև տեղահանությամբ հայրենակորույս, աշխարհասփյուռ պիտի դեգերեին՝ որբուկներ մեծացնելով, ապրած սարսափների անընդմեջ հիշողությամբ:
2. Որբերի սերունդ՝ «Ամհայրենիք» գրանցումով, որը պիտի հաղթահարեր որբության ցավը, անհայրենիք գոյությանն անընկալ-անընտել, պիտի տոկար գոյատևելու համար՝ բնատուր հողից արմատահան...
3. Եվս մի սերունդ, նետված սպիտակ Եղեռնին՝ ծուլման փորձությանը դեմ-հանդիման:
4. Հաջորդ սերունդը՝ Մայրենին կորցնելու սահմանագծին...

Հետևաբար, Հայոց ցեղասպանության հատկանշականներն առկա են յուրաքանչյուր սփյուռքահայի կենսագրականում, հայրենակորույս առաջին վերապրողից՝ ներառյալ օրերիս աշխարհասփյուռ սերունդը, որն իր ընթացիկ առօրյայում իսկ կրում է արհավիրքի հետևանքները:

Ի հավաստումն ասվածի, որպես անմիջական օրինակ, անդրադառնանք Չանդրըղի աքսորական-վերապրող, համրիչի թիվ 60 հատի ազգանվանակիր Կարապետ Թաշճեանի այսօր արդեն 90-ամյա որդու՝ Հայկ Թաշճեանի մտատանջությանը, որի մասին վկայում է իր հասակակից կաթնեղբայրը՝ Արայ Կարմիրեանը Կանադայից, ում միջոցով էլ առնչվել են Չանդրըղի աքսորական-վերապրողի ժառանգին. ահավասիկ նրա խոսքը. «Վերջին ծայր զգայուն և նոյնքան սակաւախոս ու անհամարձակ եղած է միշտ Հայկը: Միշտ ինքզինքը կը մեղադրէ արժանաւոր Հայ մը չկարենալ ըլլալու յանցանքով և կը տառապի ծուլուելու հաւամետ ամերիկացիներու համար, որոնց մաս կը կազմեն նաև իր ընտանիքի պարագաները. երեք զաւակ, երեքն ալ օտար ամուսնութեամբ

¹ Տես Արմեն Սեւան, Բանտարկեալի ծը յուշերը, Տառապանքի տարիներ 9. Նոյնիի հետ, հեղինակային հրատարակություն, Երևան, 2008, էջ 9-10:

² Աւետիս Նազգաշեան, նշվ. հուշագր., էջ 6, 10, 11 (I, II հրատ.):

³ Երուանդ Օտեան, Անիծեալ տարիներ. 1914-1919 (անձնական յիշատակներ), գլ. Չարաշուք գիշերը, Երևան, 2004, էջ 88:

⁴ Անդրանիկ Ծառուկեան, Սէրը Եղեռնին մէջ (վեպ), Գրաբեր հրատ., Երևան, 2004, էջ 122:

¹ Տես Կարո Գեորգեան, Մահագրութիւն, Վահրամ Կիրճեան, «Ամենուն տարեգիրքը», 1955, էջ 527:

² Պերճ Ստեփանյան, Հրանդ (Մելքոն Կյուրճյան), «Սովետական գրականություն», 1965, Ապրիլ, № 4, էջ 64:

իրեն տուած են ութ թռռներ, որոնք հայերէն չեն գիտեր: Հակառակ որ իր կինը հայուհի է, բայց Ամերիկա ծնած և մեծցած է և հազիւ թէ հայերէն կը խօսի: Չեզի պիտի փոխանցեն Հայկին սա խօսքերը. «Ես իմ անձնասեր որոշումով Արևմուտք գաղթելով Ամերիկայ եկայ: Ամերիկայ յուզում զգացի, գիտնալով թէ իմ Հայ արմատներէս պիտի բաժնուիմ: Ինչպէս որ եղաւ: Այո, թուրքին կարմիր ջարդէն ազատեցայ, բայց զաւակներս ու թռռներս բոլորովին ամերիկացի ըլլալով: Հագարաւոր արտագաղթներու նման ճերմակ ջարդի պատճառ եղայ»¹:

Տոկանք ուրեմն Հայաստան-Ափյուռք անքակտելի կապով՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման անվերապահ քաղաքականությանը հետամուտ, ձերբազատվելու համար ցեղասպանություն արած և հատուցումը չստացող ժողովրդի հոգեբանական բարդությամբ²:

ՆՈՐԱՀԱՅՏ ՆԿԱՐԱՇԱՐ



Նկ. 1. Կոմիտաս վարդապետի վերջին նկարը, 4. Պոլիս, 1916, Չանդըրըից վերադառնալուց հետո (համրիչ, թիվ 1)



Նկ. 2. Պարտիզակի բարձրագույն վարժարանի 1912-ի շրջանավարտները և ուսուցիչները: Նստած ուսուցիչների մեջ ծախից առաջինը՝ Մարգիս Արենց, Չանդըրի արքայական վերապրող (համրիչ, թիվ 38)



Նկ. 4. Մեծնոս Իզզեթ Իբն Չանդըրըի գինկորական 4-րդ վաչտի հրամանատարի Ա տեղակալ



Նկ. 3. Արմենակ Բարսեղյան (1883-1949) Չանդըրըի արքայական վերապրող (համրիչ, թիվ 46)



Նկ. 5. Ավետիս Նազգաչյան Այաչի արքայական վերապրող



Նկ. 6. Քրիս Տեներճյան Այաչի արքայական վերապրող

¹ Կարինե Աւագեան, Թանգարանային մէկ ցուցանմոյշ՝ մէկ փաստավաւերագիրք եւ... Նորայայտ էջեր..., «Բազմավէպ», հայագիտական-բանասիրական-գրական հանդէս, Վենետիկ, Ս. Ղազար, 2006, 1-4, էջ 142:

² Տե՛ս Մելինե Գարագաշեան, Ցեղասպանության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը, հոգեբանական վերլուծություն, ԴԱԼԼ հրատ., Երևան, 2006:

Հասցեւ.— Ամֆարայի վիայէրին Այաշ գաւառի կեդրոնին մէջ
տրէն Զարդարեան.

Քարտին Հասցէի կողմը.—
Ընդհանուր Ապահովութեան միջոցով.
Պէշոյալ, Քազաննըլար, Սաաթնը փողոց, Ուննեան ամառ-
անան քիւ 5 տիկին Վերոնիգա Զարդարեան:

Նրկերորդ եւ վերջին քարտը կրուած է Հայերէնով եւ այս անգամ
լատով: Ահաւաստի քարտը իր բնադրով.—

1915 Մայիս 28
Ենջիւրի

Վերոնիգա Վարդարեան
Այսօր իմ միջոցով
Ձեզ հետեւում յետոյ կ'առնեմ ձեր
անուամբ քարտը ինչ որ անհրաժեշտ
է ձեր պէտքեր հարմարեմ. Ենջիւրի
քարտը անպատշաճ է որ վրէժան
պէտք է լինի որ վրէժան քարտ
անհրաժեշտ է հարմարեմ
Ձեզին նոր քարտը յոյժ կարգի:
Անուամբ քարտը կ'առնեմ եւ
յոյս անեմ որ ինչ որ յարմար
է ձեր անուամբ քարտը կ'առնեմ
տրէնը եւ: Եւ քարտը կ'առնեմ
իւր քարտը կ'առնեմ ձեր անուամբ
այսինքն: Այս քարտը անհրաժեշտ է
նոր կողմից: Ձեր անուամբ քարտը
անհրաժեշտ է ձեր անուամբ
անհրաժեշտ է: Եւ քարտը կ'առնեմ
Զարդարեան

Ռուբեն Զարդարեանի վերջին քարտ-ամսակը

1915 Մայիս 28 — Էնկիւրի

Սիրելի Վերոնիգա

Այսօր կը մեկնիմք վեց ընկերներով դէպի Էսկի-Շէհիր. առանց
գիտնալու թէ անկէ ո՞ր պիտի տարուինք. հետեւաբար սպասեցէք
որ վերջնապէս տեղս ու վիճակս որոշուելէ ետք կարողանամ ձեզի
նոր հասցեւ ցոյց տալ: Առողջութիւնս լաւ է. յայտ ունիմ, թէ բու եւ
գաւառիկներու առողջութիւնն ալ տեղն է: Կը բարեւեմ ամէնէն. կը
համարուիմ Մովսաթիս աչքերը: Այս տեղ Տիգրանին հանդիպելով՝
ձեր առողջութեան նկատմամբ տեղեկութիւններ ստացայ:

Ողջագոյրելով ձեզ
հարազատդ
Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ



Հայերէնով գրուած քարտին հասցէի կողմը

Քարտին Հասցէն միւս կողմն է (Քարտի վերջին կրուած), միայն
թէ այս անգամ չկան «Ընդհանուր Ապահովութեան միջոցով» բա-
ռերը, այլ զրկուած է ուղղակի տիկին Զարդարեանին, յանձնուելու
Համար 73 օր ետք...

Ա. Ք Ս Ո Ր Ր Ի Ն Ա Մ Ա Կ



Այնրայ, 6 Յուլիս 1945

Սիրելի քոյրերս (*).—Սրտի անբաշարելի բերկուն թեամբերէկ ստացայ հեռագիրնիդ՝ Մէկ ու կէս ամիսէ իջեր ձեզմէ բացարձակապէս լուր չունենալուս՝ երեւակայութիւնս ա՛յնքան զբոռուեր էր որ ինձ կը թուէր թէ ո՛չ միայն ես քայլ առ քայլ դէպ ի գերեզման կ'երթամ, այլ և գուք այդտեղ հիւանդ էք: Տեսնենք, այս անիմանայի տառապանքներու բողբոջէն եթէ ողջ դուրս գամ՝ ինչպէս իրարու կը վարիւք զարձակ: Անշուշտ կ'անցնի այս փոթորիկն ալ, բայց հարցը հոն է որ կարենայի դիմանալ ֆիզիքսպէս: Ես ինքզինքս աւելի առողջ և դիմացկուն կը կարծէի. բայց անա ըիջ մը ատենուան յոգնութիւն, տաք կերակուրի պակաս և անկողնի չքոյրութիւն զիս վերածեցին թոյլ զանդուածի մը որ սոյսի կանչմելու կարողութիւն չունի: Գրուես կը գամնայ շարունակ, ստամբաս ալիւս ոչինչ կրնայ մարտի. մինչև անդամ մածոնը ես կուգայ, աղիքներս կը դաւին, շաւանարար պատկած տեղս քար ըլլալէն, և ոտքերս ամբողջ վերքերով լեցուած են:



ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ (Նահասակ)

Այստեղ համոզում՝ զոյապուցին որ անկարող եմ շարունակելու ճամբաս, և անա՛ Ծ—7 օր է որ դիս վտր դրած են՝ քիչ մը հանգստանալու համայ, բայց ինչպէս կարելի է այդ դեռ 8-10 օրուան ճամբայ ունիմ մինչև Մ. Աղիշի Զեմ ալ գիտեր թէ ինչո՞ւ զիս հոգ կը զրկեն, քանի որ ո՛չ մէկ

կապ ունիմ այդ քաղքին հետ: Վեց տարի առաջ, Սահմանադրութեան նոր հռչակուած ատեն, իբր Արեւելքի թղթակից՝ հոն հանդիպեցայ քանի մը օր և իթթիհատական սպաներու հետ թե թեւի շրջեցանք, մէկ երկու բանախօսութիւն ըրինք: C'est tout!

Կարօտցեր եմ ամէնքնիդ ալ, ինչպէս կոյրը կը կարօտնայ լոյսը:

ԲԱՐՍԵՂ ՇԱՀՊԱԶ

Каринэ Авакян. Музейный экспонат все еще направляет поиск.- Одним из уникальных экспонатов Гос. Музея истории Армении является четки, на 99-и бусинках которого вырезаны фамилии или имена 103 представителей армянской интеллигенции Константинополя, которые, по заранее запрограммированному геноциду армян, были арестованы 11/24 апреля 1915 г. и сосланы в Чанкри. В результате скрупулезных поисков, автор статьи представляет новые сведения о некоторых ссыльных Чанкри и изгнанных в Аяш, а также их фотографии и письма.

Karine Avagyan. Museum Exhibit Still Directs the Search.- A unique exhibit at the State History Museum of Armenia is a material evidence of the very first day of the Armenian premeditated Genocide. These are worry-beads on the initial disproportionate bead of which is carved the following:

Then on the following 99 cylindrical and proportionate pieces are engraved the names or surnames of 103 Armenian exiles. On the 55th and 86th are engraved Levon-2, and Ohnikeans-4. It is found out that there were 2 exiles by name Levon, and 4 members of Ohnikean family – father and 3 sons. The worry-beads were engraved by an exile-martyr Varderes Atanasian, whose name is on the 71st bead. V. Atanasian was the alderman of Bera – Ferikeo (Constantinople).

During the research of about 2 decades we have also referred to the fate of those exiles that were separated from the main group and were sent to Ayash.

In the given narration we have represented materials (also photos and exile letters) newly brought to light: they are about both the exiles of Changhri and Ayash. We also have brief information (with a photo) about Vahram Kiurjhean – the son of the Ayash exile Melkon Kiurjhean(Hrand).

We have also found it relevant to put here the photo of Mehmet Izzet Bey, who was the A assistant of the commander of the 4th company of Changhri military unit. It is a pay of tribute to the memory of such Mohammedan officials who tried to remain a human being during the Sodom-Gomorrah early in the 20th century.